

ԱՆԳԻՒԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ (ԱՆԳԻԿՈՄ) ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ
ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՈՂԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ*

Սուլեն Ավետիսյան

Հայաստանը խորհրդային շրջան թևակրիսեց սոցիալ-տնտեսական ծանր իրադրության պայմաններում, երբ երկրի առջև ծառացած բազում խնդիրների թվում շարունակում էր առաջնային մնալ պատերազմի և թուրքական կոտորածների հետևանքով սուժած բազմահազար հայ փախստականների հիմնահարցը:

Դեռևս պատերազմի տարիներին հայ փախստականներին օգնելու նպատակով Մեծ Բրիտանիայում ծավալված շարժման շրջանակներում ստեղծվեցին մի շարք մարդասիրական կազմակերպություններ[1]:

Դրանց թվում էր «Անգլիան հայ փախստականներին» լոնդոնյան կոմիտեն՝ Անգլիոմը, որը պատմական գրականության և արխիվային փաստաթղթերում հաճախ անվանվում է նաև Լորդ Մերի ֆոնդ ("Lord Mayor's Fund"), չնայած, վերջինից բացի, ընդգրկում էր նաև անգլիական մի քանի այլ հայանապատ հասարակական ու բարեգործական կազմակերպություններ:

Խորհրդային կարգերի հաստատումից հետո Անգլիոմի գործունեությունը Հայաստանում ժամանակավորապես ընդհատվում է:

1920թ. նոյեմբերի սկզբներին, երբ քենակական գործերը գրավում են Ալեքսանդրապոլը, և Երևանի ու Թիֆլիսի միջև ընդհատվում է Երկարուղային երթևեկությունը, Երևանից Թիֆլիս է հեռանում նաև Անգլիոմի Հայաստանի ներկայացուցիչ Դ. Ս. Հարբորտը՝ իր տնօրինած որրանոցն ու հիվանդանոցը թողնելով Աներկոնի[2] Երևանի լիազոր, բժիշկ Աշերի հոգածությանը: 1921թ. ամռանը Հարբորտը կրկին վերադառնում է Երևան արդեն ոչ միայն որպես Լոնդոնի քաղաքագլուխ ֆոնդի, այլև մի քանի այլ բարեգործական հաստատությունների ներկայացուցիչ: 1921թ. օգոստոսի 19-ին ՀԱԽՀ արտօքին գործերի ժողկոմ Ասքանազ Մռավյանը սկզբունքային համաձայնություն է հայտնում Անգլիոմի գործունեությունը Խորհրդային Հայաստանում վերակսելու վերաբերյալ[3]:

Անգլիոմը գործունեությունն իրականացնում էր Մեծ Բրիտանիայից անմիջականորեն ստացվող նվիրատվությունների գումարների հաշվին: Կոմիտեի գործունեությունը չէր սահմանափակվում միայն թուրքական ջարդերից փրկված որբերի խնամակալությամբ՝ ներառելով նաև Միջագետքի հայ փախստականներին, ինչպես նաև Հայաստան ներգաղթածներին տրամադրվող օժանդակությունը:

Հարկ է ընդգծել, որ այս նպատակի համար միջոցներ էին հատկացվում նաև բրիտանական պետական զանձարանից: Մասնավորապես Իրաքում գտնվող հայ փախստականներին օգնելու և վերջիններին Անդրկովկաս տեղափոխելու համար բրիտանական կառավարության կողմից տրամադրվել է 35000, այնուհետև հավելյալ ևս 10000 ֆունտ ստեղինգ[4]:

** Հողվածն ընդունվել է 29.12.2014:

Հողվածը տպագրության է երաշխավորել ք.գ.դ., պրոֆեսոր Գարիկ Քեոյանը:

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՐՄԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

Կոմիտեի կարի, կոշիկի և գործվաճքեղենի արտելներում մեծահասակ որբերի հետ միասին աշխատում էին նաև զաղթականները: Ասվածից հետևում է, որ Կոմիտեն, բացի բարեգործական անհատույց օգնության տրամադրումից, լուծում էր նաև բնակչության մի որոշակի, թեկուզ և չնշին մասի աշխատատեղերով ապահովման խնդիրը:

Որբախնամ գործունեության շրջանակներում, հատկանշական է, որ Անգլկոմը չէր սահմանափակվում միայն երեխաների խնամքը որբանոցներում կազմակերպելով: Մասնավորապես կոմիտեի միջոցներով գործում էին ապաստարաններ, սննդակայաններ, արհեստանոցներ և դպրոցներ, որոնցից օգտվում էին ոչ միայն որբանոցներում ապաստանած երեխաները:

Անգլկոմի գործունեության ամենաեռում շրջանը ներառում է 1922 թվականը, երբ ամենամեծ չափով արտահայտվեց Անգլկոմի բարեգործական ներուժը: Այն մասին, որ 1922թ. Անգլկոմը ներևս ի վիճակի էր լրացուցիչ բարեգործական միջոցներ ներդնել որբերի խնամակալության համար, վկայում է ՀՍԽՀ Լուսժողովում կազմակերպված ի պատասխան՝ կոմիտեի համաձայնությունը՝ բացել ևս մեկ մանկատուն, ինչպես նաև տրամադրել որբերի ծմերային հագուստի համար մահուդ, հագուստ և պարեն:

ՀՍԽՀ ժողովում հայտապես ներկայացրած Լուսժողովում մասնավորապես նշվում է: «Խորը գիտակցելով, որ աշնան վերջերից ծանր կացության մեջ պետք է ընկնեին փողոցներում գիշերուցերեկ թափառող հարյուրավոր անտուն-անտեր երեխաները, միաժամանակ աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ մեր նախահաշվի սահմաններում բնավ չէինք կարող նույնիսկ մինիմալ չափով հոգալ այդ թշվառների կարիքները, դիմում եմ Ամերիկան եւ Անգլիական կոմիտեներին եւ խնդրում նրանց աջակցությունը: Ամերկոմը բացարձակապես մերժում է հայտնելով, որ իր միջոցները թույլ չեն տալիս իրեն նոր մանկատներ բանալ. Անգլիական կոմիտեն խոստանում է իր աջակցությունը: Հոկտեմբերի վերջերին Անգլիական կոմիտեի լիազոր Նորբորդը խոստանում է 2000 յարդ մահուդ մեր մանկատների երեխաների ծմերային հագուստի համար եւ 250 հոգու պարեն ու հագուստ, եթե Երևանում իհմնելու են նոր մանկատուն հատկապես փողոցի երեխաների համար[5]:»

Միայն 1922թ. ընթացքում Անգլկոմի կողմից Հայաստան են ներմուծվել 65 վագոն գանազան ապրանքներ[6]: Նոյն թվականին ֆոնդի հավաքած ընդհանուր գումարը կազմել է 30000 ֆունտստերլինգ, որի զգալի մասը ուղարկվել է Երևան[7]:

1922թ. դեկտեմբերին Անգլկոմը փորձում է ավելի ընդլամել գործունեության շրջանակները՝ հիմնելով նոր սննդակայաններ, որոնցից օգտվում էին ընդհանուր թվով 2700 երեխաներ: Օգնություն էր ցուցաբերվում նաև Միջազգետքից և Պարսկաստանից գաղթած թվով 6900 մարդկանց[8]՝ այդպիսով փորկելով նրանց սովոր և թշվառութան ճիշտաներից:

Հատկանշական է, որ, 1922թ. որությամբ ունենալով երկու մանկատուն, որոնք գտնվում էին Երևանում, Անգլկոմը սննդակայանների առումով փորձել է ընդգրկել ավելի լայն աշխարհագրություն՝ ներառելով մի շարք բնակավայրեր, որտեղ կենտրոնացած էին մեծաթիվ սովոր որբեր, այդ թվում՝ Էջմիածինը, Օշականը, Աշտարակը, Ղամալում, Նախիջևանը, Բաշ-Գառնին[9]:

Սակայն, ուսումնասիրելով արդեն 1923թ. դեկտեմբերի դրությամբ Արտասահմանյան օգնության կազմակերպություններում խորհրդային ներկայացուցության հաշվետվությունը, պարզվում է, որ սննդակայանների թիվը կրճատվել է, և 1923թ. հունվարից մինչև հուլիս ընկած հատվածում Անգլկոմը պահպանել է միայն մեկ սննդակայան Եջմիածնում, որտեղ օրական սնունդ են ստացել 300 երեխաներ[10]: Փաստորեն, Անգլկոմի հիմնած սննդակայանները համապատասխան միջոցների բացակայության

ՄԵՐՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍՏԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015


պատճառով գոյատուել են կարծ ժամանակահատված միայն: Այդուամենայնիվ, փաստերը խոսում են այն մասին, որ Անգլիոն իր գործունեությունը չի սահմանափակվել միայն Երևանում, այլ որքերի քանակի համեմատությամբ առկա տուղ միջոցների պայմաններում անզամ ձգտել է իր գործունեությունն իրականացնել ամբողջ Հայաստանի տարածքով՝ խնդիր ունենալով փրկել հնարավորինս մեծ թվով որքերի:

Այսպիսով՝ 1923թ. դեկտեմբերին Անգլիոն իր խնամակալության տակ ուներ 4 որբանոց (նոյն թվականի մայիսին որբանոցների թիվն ընդամենը 2-ն էր՝ 160 սաներով[11]), որտեղ բնակվում էր 483 երեխա՝ 243 տղա և 240 աղջիկ[12]: Կոմիտեի հովանավորության տակ էին գտնվում նաև մեկ հիվանդանոց, մի քանի արհեստագործական դպրոցներ և մեկ հանրակրթական դպրոց՝ 513 աշակերտներով[13], որտեղ որքերի հետ համատեղ ուսանում էին նաև կոմիտեի աշխատակիցների երեխաները:

Չնայած 1923թ. հունվար-օգոստոս ամիսներին գործունեության ընդհանուր ծավալների կրծատմանը՝ այդուհանդերձ Անգլիոնին հաջողվել է որբանոցների թիվը հասցնել երկուսից չորսի, որտեղ գտնվում էին ընդհանուր թվով 505 որքեր (տես գծապատկեր 1):

ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Անգլիոնի որբանոցներում ապաստանած երեխաների թվակազմը[14]



Ութ ամիսների ընթացքում Անգլիոնի որբանոցների երեխաների թիվը ավելացել է ավելի քան երեք անգամ՝ 160-ից հասնելով 505-ի, որը ամենաբարձր ցուցանիշն է կոմիտեի գործունեության ընթացքում:

Համեմատաբար ավելի մեծ թվով որքեր ապաստանում էին Երևանում՝ Անգլիոնի երրորդ որբանոցում, որը շենքային բարենպաստ պայմանների ելմելով՝ տեղակայված էր Ս. Սարգսի եկեղեցու նախկին թեմական դպրոցի շենքում, ինչը թույլ էր տալիս ավելի շատ երեխաներ ընդունել: Այստեղ տեղավորված էին 200 որքեր, այդ թվում՝ 123 աղջիկ և 77 տղա: Առաջին որբանոցում ապաստանում էին 19 տղա և 88 աղջիկ, չորրորդում՝ համապատասխանաբար 75 և 40: Երկրորդ որբանոցի սաները բացառապես տղաներ էին՝ թվով 83 հոգի[15]:

Այսպիսով, չնայած սննդակայանների, գաղթականությանն օժանդակության և գործունեության այլ ոլորտների մասով գործունեության զգալի կրծատմանը որբանոցների առումով, Անգլիոնը 1923թ. ընդունեց գործունեության շրջանակները՝ իր հիմնական

ՄԵՍՐՈՒ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

գործառույթը կենտրոնացնելով որբերի խնամքը մանկատներում իրականացնելու վրա:

Այդ մասին է վկայում նաև ժամանակի հասարակական-քաղաքական գործիչ, մտավորական և Ամերկումում տարբեր պաշտոններ գրադեցրած Վարագդատ Տեղյանի գրառումն Անգլկոմի մասին: Նա նշում է. «Որբանոցը նրանց (Անգլկոմի -Ս.Ա.) կենտրոնական և միակ հիմնարկն էր, որի վրա և ծախսվում էր նրանց ոչ միայն նյութական, այլև բարոյական բոլոր կապիտալները: Արդարացի դատելու համար պետք է խոստովանել, որ իսկապես Անգլկոմի որբանոցն ըստ ամենայնի լավ կազմակերպված, կահավորված և կարգավորված մի որբանոց էր, որը ոչ միայն նմանություն չուներ Ամերկոմի անկարգ և անկազմակերպ խառնարանների հետ, որոնց լավագույն դեպքում, գիշերային ապաստարան կամ հանրակացարան կարելի էր անվանել[16]:»:

1924թ. հունվարին որբերի թվաքանակը կրճատելու վերաբերյալ Անգլկոմի Լոնդոնի քարտուղարությունից ստացված նամակում նշվում է, որ «...Կոմիտեն ծրագրած է հիմնապես պահել 200 երեխաներ իբրև որբեր, այս էլ աստիճանաբար պիտի տրվի ձեր կառավարությանը, երբ արդեն երկրի դրությունը բարվորված է: ...Անցյալ մարտին մո. Հարդրուտը և ես մասնավոր դիմում կատարեցինք Կոմիտեին, որ այս ապաստարանի երեխաները մի ժամանակ ևս պետք է պաշտպանվեն, և թե այդ ժամանակ մենք ենթադրեցինք դադարեցնել ընդհանուր օգնությունը, մեր Կոմիտեն համաձայնեց անել այդ մի տարվա համար ևս: Ահա տարին լրանում է եկող մարտին, բայց Կոմիտեն նորից ժամանակը երկարացրեց մինչև հունիսը: Ուստի Կոմիտեն եկող հունիսի վերջը պիտի փափագի, որ Դուք ստանձնեք ավելորդ երեխաների հիմնական թվի՝ 200-ի 25%-ը կրճատված, որը մենք կամենում ենք պահել: Այս նշանակում է կրճատել մեր թիվը 480-ից 150-ի...»[17]:

Արդեն 1925թ. հուլիսից Անգլկոմի և ՀԽՍՀ լուսժողկոմատի միջև բանակցություններ են սկսվում 2 որբանոցները հանձնելու վերաբերյալ: Համաձայն պայմանավորվածության՝ Անգլկոմը հանձնելու էր մանկատների ամբողջ գույքը, պահեստում եղած պարենքը, 129 սանի համար հագուստ ու անկողին և յուրաքանչյուր սանի համար՝ 15 ֆունտ ստեղլինգ, ընդհաննը՝ 1935 ֆ.ստ.: Գումարը պետք է հանձնվեր Լուսժողկոմատին երկու փուլով. 1-ինը՝ 1925թ. հուլիսի 25-ին, 967 գ. ֆ. ստ., իսկ 2-րդը՝ 1926թ. հունվարի 1-ին[18]:

Այսպիսով՝ արդեն 1925թ. հուլիսին Անգլկոմի խնամակալության տակ գտնվող որբերի քանակը կրճատվելով հասել էր մինչև 129-ի, իսկ հաջորդ տարվա հունվարի 1-ից նախատեսվում էր ընդհանրապես դադարեցնել Անգլկոմի որբախնամ գործունեությունը:

Ամփոփելով վերը նշված փաստերը՝ կարող ենք ասել, որ Անգլկոմը, գործելով Հայաստանում որպես մարդասիրական նպաստամատույց կազմակերպություն, սահմանակակ ժամանակահատվածում կարողացել է իր զգալի ներդրումն ունենալ ինչպես հարյուրավոր որբերի ու գաղթականների փրկության, այնպես էլ երկրի ծանր սոցիալ-տնտեսական վիճակի հնարավորինս բարելավման գործում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Պողոսյան Բ., Հայանպաստ շարժումը Մեծ Բրիտանիայում (1914-1923թ.), Եր., ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2005, էջ 77:

ՄԵՐՃԱՎՈՐ ՄԱՀԾՏՈՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

2. Մերճավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտե, Հայաստանում 1918-1930թ. ծավալել է որբախնամ և մարդասիրական գործունեություն:
3. Մելիքսեթյան Հ., Արևմտահայերի թանագաղթը և սփյուռքահայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստան (1915-1940 թթ.), Եր., 1975, էջ 101:
4. Պողոսյան Բ., Հայանպաստ շարժումը Մեծ Բրիտանիայում (1914-1923թ.), Եր., ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2005, էջ 150:
5. Տե՛ս ՀԱԱ, ֆ. 122, գ. 1, գ. 102, թթ. 4-5:
6. Պողոսյան Բ., Հայանպաստ շարժումը Մեծ Բրիտանիայում (1914-1923թ.), Եր., ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2005, էջ 147:
7. Տե՛ս նույն տեղում, էջ 151:
8. Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, գ. 38, գ. 30, թթ. 98-105:
9. Նույն տեղում:
10. Տե՛ս ՀԱԱ ֆ. 113, Տս. 38, Պ. 32, ս. 14-16.
11. Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, գ. 38, գ. 30, թթ. 104-105:
12. Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, գ. 38, գ. 32, թթ. 14-16:
13. Նույն տեղում:
14. Ավետիսյան Ս., Անգլիական օգնության կոմիտեի (Անգլիոն) գործունեությունը Հայաստանում 1920-ական թվականներին (Փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Եր.: Պատմ. ինստիտուտ. 2014, էջ 10:
15. Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, գ. 38, գ. 33, թթ. 88-89:
16. Տերոյան Վ., Ինգերիալիստական ծիծեռնակներ. Միսիոներաբարեգործական կազմակերպությունների աշխատանքը Մերճավոր Արևելքում և Անդրկովկասում, Եր., 2008, էջ 89:
17. Տե՛ս ՀԱԱ ֆ. 113, գ. 38, գ. 45, թթ. 20-23:
18. Տե՛ս ՀԱԱ ֆ. 122, գ. 1, գ. 340, թ. 103:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Անգլիական օգնության կոմիտեի (Անգլիոն) մարդասիրական օգնությունը
Խորհրդային Հայաստանին
Սուրեն Ավետիսյան

Հոդվածը նվիրված է Խորհրդային Հայաստանում Անգլիական օգնության կոմիտեի ծավալած գործունեության լուսաբանմանը: Անգլիոն մեկն էր առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Մեծ Բրիտանիայում ստեղծված կազմակերպություններից, որոնց գործունեությունը միտված էր պատերազմի և թուրքական կոտորածների հետևանքով տուժած բազմահազար հայ որբերի ու փախստականների օգնությանը: Խորհրդային Հայաստանում Անգլիական օգնության կոմիտեն իր զգալի ներդրումն է ունեցել ինչպես հարյուրավոր գաղթականների ու որբերի փրկության, այնպես էլ երկրի ծանր սոցիալ-տնտեսական վիճակի հնարավորինս բարելավման գործում:

Բանայի բառեր՝ Անգլիոն, որբանոցներ, գաղթականներ, անգլիական բարեգործություն, Հայոքորտ, որբախնամ գործունեություն:

РЕЗЮМЕ

**Благотворительная помощь Комитета Английской помощи Советской Армении
Сурен Аветисян**

Статья посвящена деятельности Комитета Английской помощи в Советской Армении. Англком являлся одним из первых организаций, созданных в Великобритании в годы Первой мировой войны, деятельность которых была направлена на помощь многотысячным армянским сиротам и беженцам, пострадавшим от войны и турецкой резни.

В Советской Армении Комитет Английской помощи имел существенный вклад как в спасении сотен эмигрантов и сирот, так и в улучшении тяжелого социально-экономического состояния страны.

Ключевые слова: Англком, детские дома, беженцы, британские благотворительные организации, Харкорт, действия по уходу за сиротами.

SUMMARY

**The Humanitarian Aid of the English Committee for Relief of the Soviet Armenia
Suren Avetisyan**

The article aims to elucidate the activity of the English Committee for Relief in the Soviet Armenia. It was one of the organizations in Great Britain formed during the World War I that intended to help thousands of Armenian orphans and refugees affected by war and Turkish massacres.

In the Soviet Armenia English Committee for Relief had its great input not only in saving hundreds of refugees and orphans but also in developing the social-economic condition of the country.

Keywords: the English Committee, orphanages, refugees, British charities, Harcourt, orphan care activities.